ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՍԱՐԳՈՆ II-Ը ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Արևելյան Փոքր Ասիայում Ասորեստանի արքա Սարգոն II-ի (մ.թ.ա. 721-705թթ.) վարած ակտիվ արտաքին քաղաքականությանը մեծ թվով ուսումնասիրողներ են անդրադարձել[1]: Հանգամանորեն հետազոտվել են Թարալի մանր պետությունների և Մելիդի հետ Ասորեստանի ունեցած ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, հրատարակվել են խնդիրը լուսաբանող ասորեստանյան սեպագիր աղբյուրները: Մասնագետները հանգել են այն եզրակացության, որ Ասրգոն II-ին մ.թ.ա.713-712թթ. հաջողվեց իր գերիշխանությունը հաստատել տարածաշրջանի բոլոր երկրների նկատմամբ: Սակայն, միաժամանակ, նշվել է, որ այստեղ Ասորեստանի հաջողությունները դժվար է դիտել որպես վերջնական հաղթանակ, հատկապես քիչ ավելի ուշ շրջանի իրադարձությունների լույսի տակ: Ասորեստանի տիրապետությունը Թարալում և Մելիդում տևեց ընդամենը յոթ-ութ տարի, ավարտվելով մ.թ.ա.705թ.՝ այստեղ Սարգոնի կրած պարտությունով, որտեղ վերջինս զոհվեց «Կուլումմանցի Գուրդիի» դեմ մղած ճակատամարտում[2]:

Սարգոնի վտքրասիական քաղաքականությանն առնչվող աղբյուրների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Արևելյան Փոքր Ասիայում մ.թ.ա.713-712թթ. հետո Ասորեստանի տիրապետության մասին համընդհանուր ընդունելություն գտած կարծիքը որոշակիորեն չափազանցված է: Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ մ.թ.ա.713թ. թաբալյան Քիթ-Բուրուտաշ պետության արքա Ամբարիսի և մ.թ.ա.712թ. Մելիդի արքա Թարխունազիի գերվելուց և Ասորեստան տարվելուց մեկ-երկու տարի անց այստեղ Ասորեստանի դիրքերը սկսում են զգալիորեն սասանվել, որի պատճառը թաբալյան երկրներից մեկի՝ Սաուսայի հզորացումն էր: Ավելին, ամենայն հավանականությամբ, մ.թ.ա.705թ. Սարգոն II-ի թաբալյան հակառակորդը հենց Սաուսան էր, այլ ոչ ենթադրյալ կիմմերական ցեղերը[3]: Մեր կողմից ձևակերպված այս վարկածի համաձայն, մ.թ.ա.713/12-705թթ. ընթացքում Սաուսան զգա-

լիորեն ընդարձակվել էր արդեն սեփական պետականությունից զրկված և Ասորեստանի անմիջական հսկողության տակ գտնվող հարևան Բիթ-Բուրուտաշի հաշվին: Ի վիճակի չլինելով սեփական միջոցներով վերականգնել կորցրած ազդեցությունը, Սարգոն II-ը ապավինում էր Մուշկի-Փռյուգիայի աջակցությանը, որն այս պահին հակված էր Ասորեստանի հետ հարաբերությունների նորմալացման: Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Ասորեստանի տիրապետությունը Արևելյան Փոքր Ասիայում կարճատև էր և մ.թ.ա.705թ. հետո գրեթե վերացավ. ասորեստանցիները կարողացան պահպանել միայն Դաշտային Կիլիկիան (ասորեստանյան աղբյուրներում՝ Կուե):

Առաջարկվող հոդվածում վարձ կարվի պարզաբանել Սարգոնի փռքրասիական քաղաքականության որոշ կարևոր խնդիրներ, որոնց լույսի տակ զգալիորեն կխորանան ուսումնասիրվող տարածաշրջանի պատմության վերաբերյալ պատկերացումները:

Դեպի Ուրարտու մ.թ.ա.714թ. Սարգոն II-ի ձեռնարկած ավերիչ արշավանքը[4] շրջադարձային եղավ Ասորեստանի վտքրասիական քաղաքականության մեջ: Փաստորեն, մինչև Ուրարտուի ջախջախումը, Ասորեստանն ի վիճակի չէր ազատորեն գործելու Տավրոսից հյուսիս ընկած և Թիգլաթպալասար III-ի կողմից հպատակեցված երկրներում, այդ թվում Մելիդում: Արևելքից Ուրարտուն, արևմուտքից Մուշկի-Փռյուգիան զգալի ազդեցություն էին ձեռք բերել այս տարածաշրջանում: Դատելով Սարգոն II-ի տեքստերից, Մելիդը և Թաբալի երկրները դաշնակցային հարաբերությունների մեջ էին մտել Ուրարտուի և Մուշկիի հետ[5]: Այստեղ Սարգոնի ձեռնարկած պատժիչ միջոցառումը (Շինուխտուի պետության վերացումը)[6] ցանկալի արդյունքի չհանգեցրեց: Մասնավորապես, հայտնի է այս շրջանում Ասորեստանից կախյալ Կուեի արքա Ուրիկկիի՝ Ուրարտու առաքած դեսպանությունը[7], Ատունայի արքա Կուրտիսի և Բիթ-Բուրուտաշի արքա՝ Սարգոնի դրածո Ամբարիսի հակաասորեստանյան գործունեությունը[8]: Ժամանակավորապես չեզոքացնելով ուրարտական սպառնալիքը, Սարգոն II-ը դիմեց կտրուկ միջոցառումների: Նույն մ.թ.ա.713թ. ձերբակալվեցին և Ասորեստան տարվեցին Ամբարիսը և Մելիդի արքա Գունզինանին[9]: Եվ եթե Մելիդում նշանակվեց նոր արքա՝ Թարիաունազին, ապա Ամբարիսի երկիրը հայտնվեց Կուեի ասորեստանյան կառավարչի հսկողության տակ[10]: Սակայն այս միջոցառումները չվախեցին տարածաշրջանում ծավալվող իրադարձությունների ընթացքը: Ժամանակավորապես իր հակաասորեստանյան գործունեությունը դադարեցրած Ատունայի արքա Կուրտիսը վերսկսում է տարածքային զավթումները ի հաշիվ Ասորեստանին ենթակա Բիթ-Բուրուտաշի: Այդ մասին հիշատակվում է Սարգոնի՝ Կուեի իր կառավարչին գրված, սակայն չառաքված նամակում[11]: Որ այս հաղորդումը համապատասխանում էր իրականությանը, կարելի է համոզվել ժամանակակից Էրջիյաս լեռան (անտիկ աղբյուրների Արգեոս) լանջերին Կուրտիսի անունը պարունակվող երեք

հիերոգլիֆային լուվիական արձանագրությունների[12] հայտնաբերման փաստի հիման վրա: Ահա այս պահից իրադարձությունների ընթացքը դժվար է բացահայտվում:

Հայտնի է, որ մ.թ.ա.712թ. դեպի Սելիդ կազմակերպված արշավանքի ընթացքում վերջինիս արքա Թարխունագին ամրացել էր Թիլզարիմմու քաղաքում. նշանակում է, որ այս քաղաքը գտնվել է Սելիդի արքային ենթակա տարածքում[13]: Թարխունագիին գահազրկելուց հետո Սարգոնը Սելիդի համանուն մայրաքաղաքը հանձնել էր Տավրոսից հարավ գտնվող մեկ այլ լուվիական պետության՝ Կումմուխին (անտիկ աղբյուրների Կոմմագենե)[14]: Այս գործողության նպատակը, թերևս, հետևյալն էր: Ապագայում Սելիդի անհնազանդությունը կանխելու նպատակով Սարգոնը այն մասնատեց երկու մասի. հիմնականը՝ Սելիդ մայրաքաղաքով հանձնվեց իրեն լոյալ Կումմուխին, մյուս մասում, հավանաբար, պիտի տեղադրվեին ասորեստանյան կայազորներ: Սա, ինարկե, միայն ենթադրություն է, քանի որ հայտնի չէ Սելիդի՝ Կումմուխին չհանձնված տարածքի ճակատագիրը: Նման քայլ Սարգոնը ձեռնարկել էր դեռ մ.թ.ա.718թ., երբ պարտված Շինուխտուի մի մասը՝ մայրաքաղաքով հանդերձ հանձնվել էր հարևան Աառնայիին[15]: Այսպիսով, Սարգոնը ձգտում էր վերացնել Սելիդի վարչական ամբողջականությունը: Հարկ է նշել, որ այս քաղաքականությունը սպասելի արդյունքներ չտվեց, քանի որ երեք տարի անց՝ մ.թ.ա.708թ. Կումմուխի արքա Մուտալլուն, ըստ Սարգոնի, դաշինք կնքեց Ուրարտուի արքա Արգիշտի II-ի հետ, որից հետո Ասորեստանի արքան, գրավելով Կումմուխը, այն վերածեց մարզի[16]: Թե ինչպես վարվեց Սարգոնը Սելիդի՝ Կումմուխին հանձնված մասի հետ վերջինիս վերացումից հետո, հայտնի չէ:

Մ.թ.ա.712թ. իրադարձությունները հատուկ քննարկման կարիք ունեն: Բանն այն է, որ, վերացնելով Սելիդի ինքնուրույնությունը, Սարգոնը սահմանների մոտ ստեղծեց ամրությունների շղթա: Այդ մասին ուղղակի տեղեկություններ կան Սելիդի վերջին արքայի գերեվարման մասին պատմող տեքստում: Այստեղ հայտնվում է թվով տասը քաղաքների ամրացման մասին, որոնք պիտի հսկեին Ուրարտուի, Մուշկի-Փռյուգիայի և մեկ այլ քաղաքական միավորի սահմանները: Դրանք էին՝ Լուխսու, Բուրդիր, Անմուրու, Կի[խակա], Անդուարսալիա (Ուրարտուի դիմաց), Ուսի, Ուսիան, Ուարգին (Մուշկիի դիմաց), Էլլիբիր և Շինդուսարա (երկրի անունը տեքստում վնասված է):

Մինչև Սարգոնի վերոհիշյալ միջոցառումների նպատակը քննարկելը ներկայացնենք նշված քաղաքների (ավելի ճիշտ՝ ամրոցների) տեղադրությունը:

Ուրարտուի դիմաց կառուցված թվով հինգ ամրոցների համար դեռ ժամանակին Է.Ֆոռերը առաջարկել էր հետևյալ տեղադրությունները[17].

Բուրդիր. = ժամանակակից Պուրտեյրլու, Զիմարայից 7կմ հարավարևմուտք՝ Դիվրիգիից Էրզրում տանող ճանապարհի վրա:

Անմուրու. = Կեբան մադենի դիմաց՝ Եփրատի արևմտյան ափից ոչ հեռու ընկած Նեմերլի կոչվող բնակավայրը:

Կի[ակա]. = հռոմ. Կիակա, հայկ. Ջերմուկ՝ Մալաթիայից 31կմ հյուսիս:
Անդուարսալիա. ժամանակակից Իզոդլուի դիմաց:
Լուխսուի համար Է.Ֆոռերը ոչինչ չի առաջարկում:
Ս.Երեմյանը Բուրդիրը հակված է տեղադրելու բյուզանդական աղբյուրների Amara-ի տեղում (ժամանակ. Էմիրքյոյ՝ Արգուվանից ոչ հեռու)[18]:
Այսպիսով, ակնհայտ է, որ Ուրարտուի դիմաց ստեղծված ամրությունները գտնվում էին Եփրատի արևմտյան ափերի երկայնքով: Այս հանգամանքը ստիպում է ենթադրել, որ մ.թ.ա.712թ. Մելիդի արևելյան սահմանը կազմում էր Եփրատ գետը, որից արևելք այն նվաճած Սարգոնը համարում էր թշնամական տարածք:
Մուշկիի դիմաց ստեղծված ամրությունների խնդիրը, ի տարբերություն նախորդի, շատ ավելի բարդ է: Է.Ֆոռերը Ուսին նույնացնում է հռոմ. Chusa-ի հետ՝ ժամանակակից Նեվշեհիր քաղաքից 37կմ հարավ[19]: Ուսիանը համադրվում է հռոմ. Osiana-ի հետ՝ Նեվշեհիրից 30կմ հյուսիս-արևմուտք[20]: Ուարգինը պիտի գտնվեր ինչ-որ տեղ Հալիսի ոլորանի ներսում՝ Կեսարիա-Կայսերիից անտիկ աղբյուրների Tavium տանող ճանապարհի վրա[21]:
Վերջին երկու ամրությունները ենթադրաբար գտնվում են Մալաթիայից հյուսիս: Է.Ֆոռերը գանում էր, որ դրանցից Էլիբիրը պիտի գտնվեր Մալաթիայից Սիվաս տանող ճանապարհին՝ Հալբուր-վիրան կոչվող վայրում, իսկ Շինդարարան ժամանակակից Սինջանն է՝ Դիվրիղիից Զարա տանող ճանապարհի վրա[22]: Հեղինակը արձանագրության տեքստի վնասված մասում հակված էր վերականգնելու կասկերի երկրի անվանումը: Այս տեղադրությունները չեն վիճարկվում հետազոտողների կողմից, սակայն ինչ վերաբերում է Կասկուի վերականգնմանը, ապա այստեղ ամեն ինչ չէ որ պարզ է: Բանն այն է, որ կասկերի երկրի հիշատակությունը Սարգոն II-ի տեքստերում[23] որևէ հիմք չի տալիս այն դիտելու որպես էական սպառնալիք Ասորեստանի համար: Այնպես որ այս հարցը առայժմ բաց է մնում:
Փորձենք մեկնաբանել փռյուգական սահմանների մոտակայքում կառուցված ամրությունների հարցը:
Վերոհիշյալ երեք ամրոցների տեղադրությունը Թաբալի արևմտյան սահմանների մոտակայքում ինքնին արդեն վկայում է այն մասին, որ տվյալ պահին Ասորեստանը Թաբալը դիտում էր որպես իր անմիջական գերիշխանության տակ գտնվող տարածք: Մելիդի և Բիթ-Բուրուտաշի տեղական արքայատոհմերի վերացումից հետո իսկապես դրա համար հիմքեր կային: Փաստորեն, մ.թ.ա.712թ. վաքրասիական երկրներից ներքին ինքնուրույնությունը պահպանել էր միայն Սաուսան, որը, սակայն, Բիթ-Բուրուտաշի արքա Ամբաբիսի պարտությունից ու գերեվարվելուց հետո ստիպված էր եղել հնազանդություն հայտնել Սարգոնին[24]:
Անկասկած, մ.թ.ա.713-712թթ. կարելի է համարել Փոքր Ասիայում Ասորեստանի ռազմաքաղաքական հաջողությունների բարձրակետը: Որովհետև քիչ անց իրադարձությունների ընթացքը ակնհայտորեն ի վնաս Ասո-

ռեստանի էր: Մ.թ.ա.710/09թ. թվագրվող Սարգոն II-ի նամակում՝ ուղղված Կուեի ասորեստանյան կառավարչին՝, հայտնվում է Սաուսնայի հակաասորեստանյան գործողությունների մասին: Մասնավորապես ասվում է, որ Ատունան գրավել էր Բիթ-Բուրուտաշի մի շարք բնակավայրեր: Այս նամակում հաղորդվում է նաև այն մասին, որ Ասորեստանի և Մուշկիի հարաբերությունները բարելավվել են և Սարգոնը հույս ունի վերջինիս օգնությամբ հաշվեհարդար տեսնել թաբալյան երկրների հետ: Նկատի ունենալով վերոհիշյալ նամակի արտակարգ կարևոր նշանակությունը, ներկայացնենք դրանից որոշ հատվածներ.

«Ինչ վերաբերում է քո գրածին. Մուշկիի Միտայի բանագնացը եկավ ինձ մոտ, բերելով ինձ Կուեի տասնչորս մարդկանց, ում Ուրիկը ուղարկել էր Ուրարտու որպես դեսպաններ՝, դա շատ լավ է: Իմ աստվածներ Աշշուրը, Շամաշը, Բելը և Նաբուն հիմա գործել են և առանց կռվի կամ այլ բանի մուշկը [նկատի ունի Միտային - Ա.Ք.] տվել է իր խոսքը և դարձել մեր դաշնակիցը» (ND 2759):

«Ինչ վերաբերում է քո գրածին. «Ես չպետք է ուղարկեմ իմ բանագնացին մուշկի մոտ առանց արքայի՝ տիրոջս թույլտվության», այժմ ես ասում եմ քեզ, որ դու չպիտի կտրես քո բանագնացին մուշկի ներկայությունից: Գրիր նրան բարեկամական խոսքերով և միշտ տեղեկացիր նրա մասին, մինչև ես ժամանակ կունենամ»:

Այնուհետև խոսվում է Մուշկիի հետ հետագայում բարիդրացիական հարաբերություններ պահպանելու մասին, որից հետո հայտնվում է հետևյալը.

«Ինչ վերաբերում է քո գրածին. Ուրբալան [կարող է հեռանալ] արքայից՝ տիրոջիցս, այն պատճառով, որ ատունացիները և իշտունդացիները եկել և գրավել են Բիթ-Պարուտայի քաղաքները՝, այժմ, երբ մուշկը մեզ հետ խաղաղություն է հաստատել և [...] ինչ կարող են այստեղ անել Թաբալի արքաները: Դու կսեղմես նրանց այդ կողմից, իսկ մուշկը այն կողմից, այնպես որ դու քո գոտին կգցես նրանց վրա»:

Սարգոնի նամակի շնորհիվ պարզվում է փոքրասիական տարածաշրջանում մ.թ.ա.712թ. անմիջապես հաջորդող ժամանակահատվածում սկսված քաղաքական իրադարձությունների պատկերը:

Առաջին կարևոր եզրակացությունը այն է, որ Մուշկիի և փոքրասիական երկրների միջև այլևս չկային դաշնակցային հարաբերություններ, ինչպիսիք վկայված են մի քանի տարի ավելի վաղ շրջանի համար: Այս ստումով հատկանշական է Կուեի կախյալ արքա Ուրիկկիի՝ Ուրարտու ուղարկված 14 մարդուց բաղկացած գաղտնի դեսպանության ձերբակալումը Մուշկիի տարածքում և հանձնումը Ասորեստանին, ինչի մասին հաղորդվում է Սարգոնի նամակի սկզբում: Դժվար է ասել, թե ինչով էր պայմանավորված դեռ ոչ վաղ անցյալում անհաշտ հակառակորդների մերձեցումը: Հետաքրքիր է, որ դրա նախաձեռնությունը գալիս էր Մուշկիից, քանի որ Սարգոնը երկու երկրների հարաբերությունների բարելավման մասին, ըստ նամակի, տեղեկանում է

Կուեի կառավարչից: Այստեղ հնարավոր են երկու բացատրություններ: Առաջին, Մուշկիին ձեռնտու չէր Ասորեստանի հետ լարված փոխհարաբերությունների պահպանումը և նրա արքա Միտան ցանկանում էր վերջ տալ հակամարտությանը, բավարարվելով արևելափոքրասիական տարածաշրջանի նկատմամբ նվազագույն ազդեցության հեռանկարով, որ խոստանում էին թաբալյան երկրների դեմ Ասորեստանի հետ համատեղ ձեռնարկվելիք միջոցառումները: Երկրորդ, Թաբալում ի հայտ եկած քաղաքական նոր ուժերը ինչ-որ սպառնալիք էին պարունակում Մուշկիի համար: Ներկայումս հնարավոր չէ նախապատվությունը տալ վերոհիշյալ պատճառներից որևէ մեկին, չնայած, որոշ փաստարկներ ստիպում են հակվել երկրորդի կողմը-[0].

Երկրորդ եզրակացությունը թաբալյան Ատունայի ռազմաքաղաքական վերելքն է, որ հանգամանորեն քննարկվել է մեր նախորդ ուսումնասիրություններում[27]: Ընդ որում, Ատունայի հակաասորեստանյան գործողությունների սկիզբը, մ.թ.ա.713թ. վկայված ժամանակավոր դադարից հետո, կարելի է բավական հստակ թվագրել մ.թ.ա.712-710թթ. միջև ընկած ժամանակահատվածով: Դրանք պիտի սկսվեին Սարգոնի կողմից Մուշկիի դիմաց սահմանային ամրությունների կառուցումից հետո:

Երրորդ եզրակացությունը Սարգոնի վտքրասիական քաղաքականության մեջ թաբալյան երկրներից մեկի՝ Տուվանային (ասորեստանյան աղբյուրներում՝ Տուխանա) հատկացված դերն էր: Նամակում հիշատակվող Ուրբալան նույն ինքը հիերոգլիֆային աղբյուրներից հայտնի Տուվանայի արքա Վաբպալավասն է: Թե ինչու պիտի Ուրբալան երես թեքեր Ասորեստանից Բիթ-Պարուտայի (Բիթ-Բուրուտաշի գրության ձևերից մեկը) քաղաքները Ատունայի և Իշտունդայի կողմից զավթվելուց հետո, կարող է պարզվել Սարգոնի քաղաքականությունը բնորոշող քիչ ավելի վաղ շրջանի իրադարձությունների լույսի տակ: Հայտնի է, որ Ամբարիսի ձերբակալումից հետո Բիթ-Բուրուտաշում կառավարել է նրա կինը՝ Սարգոնի դուստր Ախատ-արիշան[28]: Չնայած առայժմ պարզ չէ վերջինիս կարգավիճակը Բիթ-Բուրուտաշում, սակայն մ.թ.ա.712թ. Մելիդի, իսկ մ.թ.ա.718թ. Շինուխտուի թագավորությունների վերացումից հետո այդ երկրների տարածքի երկատման փաստը արդեն իսկ կարելի է ընդունել որպես Ասորեստանի արքայի քաղաքականությանը բնորոշ երևույթ: Վերջին երկու դեպքերում վերացված թագավորության մի մասը հանձնվում էր հարևան լուվիական պետությանը՝ լրացուցիչ հարկ վճարելու պայմանով[29]: Ամենայն հավանականությամբ, նույնպես էր վարվել Սարգոն II-ը նաև Բիթ-Բուրուտաշի հետ: Պետության մի մասը մնացել էր Ախատ-Արիշայի կառավարման ներքո (հավանաբար, Կուեի կառավարչի գերակայությամբ), իսկ մյուս մասը հանձնվել էր Ասորեստանին լոյալ Տուվանային:

Վերոհիշյալ եզրակացությունների լույսի տակ անհնար է անտեսել մի կարևոր դիտարկում: Թվում է, որ պատահական չի կարելի համարել Մուշկիի ասորեստանամետ դիրքորոշման և Ատունայի հակաասորեստանյան

ակտիվության սինխրոնիզմը: Որ դա իրոք այդպես է, դժվար չէ համոզվել առկա աղբյուրների լույսի տակ:

Մ.թ.ա.713թ. Բիթ-Բուրուտաշի արքա Ամբարիսը համագործակցում էր Մուշկիի հետ, և, բնականաբար, վերջինս դիտվում էր որպես Ասորեստանի հակառակորդ: Մ.թ.ա.712թ. Սարգոնը Մուշկիի սահմանների մոտակայքում ամրություններ էր կառուցում՝ հնարավոր հարձակումներին դիմագրավելու նպատակով: Իսկ մ.թ.ա.710 կամ 709թ. անմիջապես նախորդող շրջանում Ատունան գրավել էր Ասորեստանին ենթակա (ասորեստանամետ Տուվանայի միջնորդավորմամբ) Բիթ-Բուրուտաշի բնակավայրերը և Մուշկին ձգտում էր մերձենալ Ասորեստանի հետ:

Արդյո՞ք այս երկու իրադարձությունները վտխկապակցված չէին: Պատասխանը չի կարող միանշանակ լինել փաստական նյութի բացակայության պատճառով: Թեև, նկատի ունենալով Սարգոն II-ի պասսիվությունը ընդհուպ մինչև նրա մ.թ.ա.705թ. ճակատագրական արշավանքը դեպի Թաբալ, կարելի է ենթադրել, որ այստեղ արագորեն ձևավորվում էր մի լուրջ քաղաքական ուժ[30], որը և հարկադրեց Սարգոնին անձամբ գլխավորելու թաբալյան պատերազմը: Չի կարելի բացառել Ատունայի՝ դեպի արևմուտք ուղղված ռազմական ակտիվության հնարավորությունը:

Թաբալյան Ատունայի կողմից Տուվանային հանձնված Բիթ-Բուրուտաշի քաղաքների զավթումը, թվում է, որոշակիորեն պայմանավորված էր նաև էթնիկական դրդապատճառներով: Բանն այն է, որ մ.թ.ա.720-ական թվականներին Թաբալում, Ասորեստանի մասնակցությամբ, կարծես տեղի էր ունենում մի առայժմ դժվար տեսանելի պրոցես: Այն կարելի է ներկայացնել որպես ավանդաբար անհնազանդություն դրսևորող լուվիական պետությունների դեմ տեղում հակակշիռ ստեղծելու քաղաքականություն: Վերջինս իրականացվում էր լուվիական արքայատոհմերին ենթադրաբար այլ էթնիկական բովանդակություն ունեցող արքայատոհմերով վախարինելու միջոցով: Որպես այդ քաղաքականության դրսևորում պիտի համարել դեռ Թիգլաթ-պալասար III-ի կողմից մ.թ.ա.732-729թթ. ընթացքում Թաբալի արքա Վասուսարմասի փոխարեն ոչ արքայական ծագում ունեցող Խուլլիի (հիերոգլիֆային աղբյուրներում՝ Խուլիս) թագադրումը[31]:

Այս իրադարձությունը կարևորվում է երկու դիտարկումների միջոցով.

1) Խուլլիի կառավարումից հետո է միայն այս պետությունը ասորեստանյան աղբյուրներում սկսում կոչվել «Բիթ-Բուրուտաշ» (նաև՝ Բիթ-Բուրիտիշ, Բիթ-Պարուտա): Բանն այն է, որ պետականության լավ ավանդույթներ ունեցող Թաբալում «բիթ» («տուն») բաղադրիչով պետական կազմավորման հայտնվելը առնվազն տարօրինակ է: Ասորեստանյան տեքստերում անվանադիր նախնու անունից կամ ցեղանունից կազմված այսպիսի պետականությունները բազմիցս հիշատակվում են արամեական, քաղդեական, մարական և այլ ցեղապետությունների առնչությամբ:

2) Խուլլիի և նրա որդու՝ Ամբարիսի անունները չեն կարող սստուգաբան-

վել խեթա-լուվիական լեզուների հիման վրա: Նույնը նաև հարևան Աառունայի՝ առայժմ հայտնի երկու արքաների անունները՝ Ասխու(ի)ս և Կուրտիս:

Թերևս, առայժմ վաղ է հեռուն գնացող եզրակացություններ անել վերոհիշյալ փաստարկների հիման վրա, սակայն հետագայում լրացուցիչ փաստերի հայտնվելու դեպքում դրանք կարող են զգալի պարզություն մտցնել Սարգոնի վաքրասիական քաղաքականության լուսաբանման հարցում: Ուստի այստեղ սահմանափակվենք միայն աշխատանքային վարկած առաջադրելով. Բիթ-Բուրուտուշի և Ատունայի արքայատոհմերը, ամենայն հավանականությամբ, լուվիական չեն եղել, այլ ներկայացրել են տարածաշրջանի մեկ այլ էթնիկական խումբ, որին Սարգոն II-ը օգտագործել է լուվիական պետությունների անջատողական միտումների դեմ իր պայքարում: Ըստ այդմ, Աառունայի կողմից Տուվանային հանձնված՝ նախկինում Բիթ-Բուրուտուշին պատկանող տարածքների գրավումը պիտի դիտել որպես Թաբալի երկրորդ (ոչ լուվիական) էթնիկական տարրի պայքար ընդդեմ Ասորեստանի: Սարգոնի կողմից Թաբալում և Մելիդում մ.թ.ա.718-713թթ. իրականացված քաղաքականության արդյունքում տեղի լուվիական պետությունները գրկվեցին ոչ միայն իրենց արքայատոհմերից, այլև ազնվականությունից և բնակչության զգալի զանգվածից: Այս ժամանակաշրջանի տեքստերում շատ են բնակչության բռնի տեղահանման մասին տեղեկությունները[32]: Տեղահանված բնակչության վտխարեն Թաբալում և Մելիդում բնակեցվում էին Միջագետքից բերված ժողովուրդներ: Այս պարագայում նպատակահարմար չէ ենթադրել, որ նյութական և մարդկային մեծ կորուստներ կրած լուվիական մանր պետությունները կարող էին հաջողությամբ դիմագրավել Ասորեստանին: Թաբալում տիրող այն իրավիճակը, որ վերականգնվում է Սարգոն II-ի՝ Կուեի կառավարչին ուղղված նամակի հիման վրա, ենթադրում է այստեղ մեծ ռազմական պոտենցիալ ունեցող էթնիկական տարրի գոյություն: Մ.թ.ա.705թ. և հաջորդող տասնամյակների իրադարձությունները վերոհիշյալ ենթադրության լավագույն վկայություններն են: Թաբալում տիրող՝ Ասորեստանի համար աննպաստ իրավիճակը, հակառակ Մուշկիի հետ կապված Սարգոն II-ի սպասելիքների, հաջորդող 4-5 տարիների ընթացքում էլ ավելի խորացավ, ստիպելով Ասորեստանի արքային անձամբ գբաղվելու այդ խնդրով: Իսկ Սարգոնի զոհվելուց հետո Թաբալում և Մելիդում ձևավորվեցին երկու նոր պետություններ, որոնք այսուհետև, իրենց գոյության գրեթե ողջ ընթացքում, այլևս չէին գտնվում Ասորեստանի գերիշխանության տակ: Սի պահ նույնիսկ նրանք միավորվեցին մեկ պետության մեջ, որը հայտնի է Աշշուրբանապալի տեքստերից որպես Թաբալի թագավորություն[33]:

SUMMARY

The paper deals with several aspects of Anatolian policy of Sargon II of Assyria (721-705 B.C.), which could further our knowledge of the main tendencies of the ethnopolitical development of this region.

The author puts down a hypothesis, according to which, during the Anatolian cxpansion of Sargon II the royal dynasties of two kingdoms - Bit-Burutash and Atuna (south-central Asia Minor) were representing an intrusive ethnic group, rather than local Luwian population. Assyrian kings had made use of this new ethnic element in their north-western policy against Luwian kingdoms of Tabal (late Tiglathpileser III, Shalmaneser V and early Sargon II). But soon after Sargon II, s accesion, Bit-Burutash and Atuna started to show separatism which led to the weakening of Assyria, s positions in Tabal and whole eastem Asia Minor, culminating in 705 B.C. campaign against Gurdi of Kulumman. As a result, Assyria lost any control over territories to the north of Taurus range.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. H.Tadmor, The Campaigns of Sargon II of Assur: a chronological-historical study, "Journal of Cuneiform Studies" 12, 1958, p.22ff.; J.N.Postgate, Assyrian Texts and Fragments, "Iraq" 35, 1973, p.13ff.; J.D.Hawkins, Assyrians and Hittites, "Iraq" XXXVI, 1974, P.1/2, p.67ff.; The Neo-Hittite States in Syria and Anatolia. - In: "Cambridge Ancient History", vol.III/1, 1982, p.409ff.; M.Wäfler, Zu Status und Lage von Tabal, "Orientalia" 52, fasc.1, 1983, S.182ff.; B.Lanfranchi, Sargon, s Letter to Aššur-šarru-uur: an Intcıpretation, "State Archives of Assyria and Babylonia. Bulletin" II/1, 1988, p.59ff; Ա.Քոսյան, Տուն Թորգոմայ, Եր., 1998, էջ. 18-32; Նույնի՝ Sargon II and Atuna: an Interpretation. - «Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական ժողովածու» (հանձնված է հրատարակության): Սարգոն II-ի փոքրասիական քաղաքականության հարցը հանգամանորեն քննարկվել է Ս.Երեմյանի կողմից (Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968/2, էջ.100-105): Հոդվածի լույս տեսնելուց հետո ընկած շրջանում զգալիորեն աճել է սկզբնաղբյուրների և համապատասխան ուսումնասիրությունների քանակը, որոնք ստիպում են կրկին անդրադառնալ խնդրո առարկա թեմային: Հեղինակի մի շարք փաստեր և եզրակացություններ արդեն հնացած են կամ ուղղակի սխալ, որոնք կնշվեն սույն ուսումնասիրության համապատասխան հատվածներում:

2. Ս.Երեմյանը, հետևելով Մ.Շտրիքին, Կուլումմանը տեղադրում էր Ուրմիա լճից հարավ-արևմուտք ընկած ժամանակակից Ուշնուե քաղաքի շրջանում, իսկ Սարգոն

II-ի հակառակորդներին նույնացնում էր կիմմերների հետ (նույն տեղում, էջ 105, ծան.64). երկու տեսակետներն էլ որևէ հիմք չունեն, բացի վերոհիշյալ տեղանուններից առաջինի արտաքին նմանությունից փոքրասիական Խուրուշնային: Բանն այն է, որ Սարգոնի մ.թ.ա.705թ. ճակատագրական մասին հայտնի երկու տեքստերը հստակ մատնանշում են Թարալը (H.Tadmor, "Journal of Cuneiform Studies", vol.12, 1958, p.97):

3. Մ.թ.ա.705թ. Թաբալում Սարգոն II-ի հակառակորդ «Կուլումմանցի Գուրդիի»՝ թաբալյան Ստուանայի հետ անվիճելի կապի մասին տեսակետը տես Ա.Քոսյան, Տուն Թորգոմայ, էջ. 29-32; Նույնի՝ Sargon II and Atuna: an Interpretation:

4. F.Thureau-Dangin, Une relation de l,huitieme campagne Sargon II, Paris. 1912: արշավանքի երթուղու շուրջը՝ Հ.Բ.Արտյոնյան, Топонимика Урарту, 1986, с.292 сл.

5. D.D.Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, vol.I-II, Chicago, 1926-1927 (hereafter ARAB), I §§ 8, 55, 64, 118.

6. ARAB II § 55.

7. Այդ մասին տես ստորև տեքստում:

8. ARAB II §§ 25, 55.

9. ARAB II §§ 72, 92, 99.

10. Դատելով Սարգոնի՝ Կուեի ասորեստանյան կառավարչին ուղղված նամակից, Բիթ-Բուրուտաշի մի մասը հանձնվել էր հարևան Տուվանային (տես ստորև):

11. Այդ մասին տես ստորև տեքստում:

12. P.Meriggi, Manuale di Eteo Geroglifico, P.II: Testi – 2 a e 3 a serie, Roma, 1975, Nos.68-70.

13. Ըստ Սարգոն II-ի տեքստերի, Թիլ-Գարիմմուն հանդիսացել է Մելիդի քաղաքներից մեկը: Ընդ որում, Թիլ-Գարիմմուում պետություն ստեղծած Գուրդիի դեմ արշավանքի նկարագրության մեջ այն հիշատակվում է որպես Թաբալի սահմանի մոտ գտնվող քաղաք (ARAB II §§ 290, 292): Սարգոն II-ի և Սինաքերիբի օրոք Թիլ-Գարիմմուն, ակնհայտորեն, նախկին Մելիդի կարևորագույն կենտրոնն էր դարձել: Բավարար հիմքեր կան պնդելու, որ մ.թ.ա.VIIIդ. վերջին քառորդում Սելիդում կառավարած Սարգոնի դրածոներ Գունզինանին և Թարխունազին ծագում էին Թիլ-Գարիմմուից (այս խնդիրը հատուկ ուսումնասիրության առարկա է):

14. ARAB II §§ 27, 45.

15. ARAB II § 55.

16. ARAB II § 45, 64.

17. E.Forrer, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920, S.75.

18. Ս.Երեմյան, «ՊԲՀ», 1968/2, էջ 104, ծան.60:

19. E.Forrer, Op.loc., S.76; Ս.Երեմյան, «ՊԲՀ», 1968/3, էջ 104:

20. E.Forrer, Op.loc.; Ս.Երեմյան, Նույն տեղում:

21. E.Forrer, Op.loc.; Ս.Երեմյանը Ասսրզինը փնտրում է անտիկ աղբյուրների Tiyana-ի շրջանում՝ Հալիսից հարավ (Նույն տեղում):

22. E.Forrer, Op.loc., S.75f.

23. ARAB II §§ 80, 92, 99.

24. ARAB II, § 214.

25. J.N.Postgate, "Iraq" 35, 1973, p.13ff.; S.Parpola, The Correspondence of Sargon II, P.I: Letters from Assyria and the West, Helsinki, 1987, N.1, 3ff.

26. Այս խնդիրը կքննարկվի մեկ այլ աշխատությունում:

27. Ա.Քոսյան, Տուն Թորգոմայ, էջ 18-27:

28. Այդպես է ենթադրում Ն.Փոսթգեյթը (J.N.Postgate, "Iraq" 35, 1973, p.31):

29. ARAB II § 55.

30. Այս վարկածը առաջ է քաշվել մեր նախորդ աշխատություններից մեկում Ա.Քոսյան, Տուն Թորգոմայ, էջ. 18-32:

31. Խուլին արքա էր նշանակվել մ.թ.ա.732-729թթ. միջև, լուվիական արքա Վասուսարմասի (ասորեստ. Վասատրմե) ապստամբության ճնշումից հետո: Այս Խուլին գահազրկվել էր Սալմանասար V-ի օրոք (մ.թ.ա.726-722 թթ.), սակայն վերահաստատվել էր գահին Սարգոնի կողմից (տես M.Wäfler, "Orientalia" 52, fasc.1, 1983, S.183f):

32. Ա.Քոսյան, Տուն Թորգոմայ, էջ.18-19:

33. ARAB II, § 781.